ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 121-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Վահե Աշոտի Շոլինյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1172469 վկայականը, անշարժ գույքի /բնակելի տան/ բաժնեմասերի նվիրատվության պայմանագիրը, Օձուն համայնքի ղեկավարի 15.03.2013թ. N 27-Ա որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Վահե Աշոտի Շոլինյանին նվիրատվության պայմանագրով պատկանող, մարզ Լոռի, Օձուն համայնք Ամոջ գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Ամոջ, 5-րդ փողոց, 5/1 բնակելի տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 09
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 122-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի դիմումը, սեփականության իրավունքի N 18112021-06-0034 վկայականը, հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն և թույլատրել կատարելու համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 9 փողոց, 33/5 հասցեում, Արտեմ Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքի 0.4 կՎ էլեկտրամատակարարման աշխատանքները:
2. Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 09
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 123-Ա

06-060-0019-0017 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ 0.01155 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14.11.2022Թ. N 59-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետով և 3-րդ կետով, հիմք ընդունելով Մանուշակ Մակինյանի դիմումը, անձնագրերի պատճենները, Հաղպատ գյուղի տնտեսական N 1 գրքից քաղվածքը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Վերականգնել Մանուշակ Հմայակի Մակինյանին, Հովիկ Հմայակի Մակինյանին և Աշխեն Հմայակի Մակինյանին պատկանող, Լոռու մարզի Հաղպատ համայնքում գտնվող, 06-060-0019-0017 ծածկագրից առանձնացվող, 0.1155 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Ալավերդի համայնքի ղեկավարի 14.11.2022թ. «Փոստային հասցե տրամադրելու մասին» N 59-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

4.1 «Մանուշակ Հմայակի Մակինյանին» բառերից հետո լրացնել «Հովիկ Հմայակի Մակինյանին և Աշխեն Հմայակի Մակինյանին» բառերը:

4.2 «սեփականության իրավունքով» բառերի փոխարեն կարդալ «համասեփականության իրավունքով» բառերը:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 12

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 124-Ա

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N 88 որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Հմայակ Հարությունի Խանդամիրյանի, Գևորգ Հմայակի Խանդամիրյանի, Կարապետ Հմայակի Խանդամիրյանի, Գոհար Հմայակի Խանդամիրյանի, Շամամ Հրաչիկի Կիրակոսյանի կողմից լիազորված անձ Մետաքսյա Դիմիտրևնա Թորոսյանի դիմումը, անձնագրերի պատճենները, լիազորագրերը, սեփականության իրավունքի N 088572 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Փոփոխել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազանի 60/23ա բնակարան հասցեում գտնվող, Հմայակ Հարությունի Խանդամիրյանին, Շամամ Հրաչիկի Կիրակոսյանին, Գոհար Հմայակի Խանդամիրյանին, Գևորգ Հմայակի Խանդամիրյանին, Կարապետ Հմայակի Խանդամիրյանին համասեփականության իրավունքով պատկանող բնակարանի գործառնական նշանակությունը՝ որպես հացաբուլկեղենի խանութ, հասարակական սպասարկման օբյեկտի գործառնական նշանակության:
2. Քաղաք Ալավերդի, Ջրավազանի 60/23ա հասցեում գտնվող բնակարանին, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, 60 շենք, 23/1 բնակարան փոստային հասցե:

3. Նշված շինությունը կառուցվածքային փոփոխության չի ենթարկվել, ուստի, ճարտարապետա-հատակագծային առաջադրանք և քաղաքաշինական այլ փաստաթղթեր չեն պահանջվում:
4. Նշված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 12
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 125-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻԻ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23.10.2019Թ. N 341-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության 16.12.2021թ. N 397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N 731-Ն, 18.05.2006 N 912-Ն, 05.01.2022թ. N 13-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ Ալավերդի քաղաքին փոխանցված գույքերի ցանկից բացակայում է ավտոմեքենաների կայանատեղիի շենք-շինությունները, որը, սակայն, հաշվառվել է Ալավերդու համայնքապետարանի հաշվապահական հաշվեկշռում և համայնքների միավորման արդյունքում նշված գույքը փոխանցվել է Ալավերդի խոշորացված համայնքին, ինչպես նաև համայնքի տիրապետության տակ չկան ավտոմեքենաների կայանատեղիի շենք-շինությունների նվիրաբերվող քաղաքաշինական փաստաթղթեր՝ շինարարության թույլտվություն, փոխանցման ակտ, նախագիծ և այլն, ինքնակամ՝ առանց թույլտվության կառուցված ավտոմեքենաների կայանատեղիի շենք-շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինությունների հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սողոմոն Թեհլերյան փողոցի հարավային մասի՝ 06-002-0016-0005 կադաստրային ծածկագրում գտնվող, Ալավերդի քաղաքային խորհրդի գործկոմի կողմից 1968 թվականին ինքնակամ կառուցված, Ալավերդու համայնքապետարանի կողմից 2018 թվականին ինքնակամ վերակառուցված, ընդհանուր՝ 508.3 քմ արտաքին մակերեսով (432,2 քմ ներքին մակերեսով) հասարակական գործառնական նշանակության ավտոմեքենաների կայանատեղիի շենք-շինությունների նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել համայնքային սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի քաղաքի Սողոմոն Թեհլերյան փողոցի հարավային մասի՝ 06-002-0016-0005 կադաստրային ծածկագրում գտնվող, 1968թ. ինքնակամ կառուցված և 2018թ. ինքնակամ վերակառուցված, կադաստրի կոմիտեում 2022ZKUEUN ծածկագրով հաշվառված, 508.3 քմ արտաքին մակերեսով (432.2 քմ ներքին մակերեսով) հասարակական գործառնական նշանակության ավտոմեքենաների կայանատեղիի շենք-շինությունները՝ սպասարկման համար զբաղեցրած 0.1724 հա մակերեսով հողամասով՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
3. Սողոմոն Թեհլերյան փողոցի հարավային մասում գտնվող հասարակական գործառնական նշանակության ավտոմեքենաների կայանատեղիին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սողոմոն Թեհլերյան փողոց, 38 փոստային հասցե:
4. Բնակավայրերի հասարակական նշանակության ավտոմեքենաների կայանատեղիի շենք-շինությունների զբաղեցրած 0.1724 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոմեքենաների կայանատեղիի շենք-շինությունների նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ ում օրինական իրավահաջորդն է հանդիսանում Ալավերդու համայնքապետարանը, օրինականացված ավտոմեքենաների կայանատեղիի շենք-շինությունները և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:
7. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 23.10.2019թ. «Փոստային հասցե տրամադրելու մասին» N 341-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 12
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 126-Ա

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.10.2022Թ. N 234-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.5 կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 25072022-06-0030 վկայականը, ժառանգության իրավունքի վկայագրերը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 28/10/2022թ. տրված N Կ-28102022-06-0032 որոշումը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ուժը կորցրած ճանաչել Շնող համայնքի ղեկավարի 06.10.2022թ. «Փոստային հասցե տրամադրելու մասին» N 234-Ա որոշումը:
2. Լոռու մարզի Շնող գյուղի 06-088-0133-0008 կադաստրային ծածկագրում գտնվող, 0.301 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 16-րդ փողոց, 1-ին փակուղի, 1/1 հողամաս փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 127-Ա

ԼԵՅԼԻ ՀԱՍԱՆԽԱՆԻ ԲԵԳՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթով և հիմք ընդունելով Ախթալայի համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 12.12.2022 թվականի թիվ 7 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նեղոց գյուղի 3 փողոց , 1 փակուղի, 2 տուն հասցեի բնակչուհի Լիդա Ալեքսանի Բեգջանյանի / ծնված՝ 01.04.1932թ./ համար պատրոնաժ նշանակել Լոռու մարզի Նեղոց գյուղի 3 փողոց , 1 փակուղի, 2 տուն հասցեի բնակչուհի Լեյլի Հասանխանի Բեգջանյանին /ծնված՝ 09.09.1963թ./:
2. Լեյլի Հասանխանի Բեգջանյանին վերապահել ստանալու և տնօրինելու Լիդա Ալեքսանի Բեգջանյանին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը՝ նրան պահելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 128-Ա

ԱՍՊՐԱՄ ՍԱՐԳՍԻ ԳԻԳՈԼՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթով և հիմք ընդունելով Ախթալայի համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 12.12.2022 թվականի թիվ 7 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա քաղաքի Շահումյան փողոց, 5 շենք, 19 բնակարան հասցեի բնակիչ Արթուր Զալիկոյի Գիգոլյանի /ծնված՝ 11.03.1980թ./ համար պատրոնաժ նշանակել Ախթալա քաղաքի Շահումյան փողոց, 5 շենք, 19 բնակարան հասցեի բնակչուհի Ասպրամ Սարգսի Գիգոլյանին /ծնված՝ 29.12.1987թ./:
2. Ասպրամ Սարգսի Գիգոլյանին վերապահել ստանալու և տնօրինելու Արթուր Զալիկոյի Գիգոլյանի հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը՝ նրան պահելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 129-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետով, հիմք ընդունելով Գրիգոր Միխայլի Ղազարյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 11122018-06-0025 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Գրիգոր Միխայլի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Մեծ Այրում գյուղի 06-073-0217-0022 ծածկագրում գտնվող, 0.70412 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող՝ ցածրարժեք հողատեսքը փոխադրել բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարկի, կորիզավոր այգի հիմնելու նպատակով:
2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
3. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 130-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետով, հիմք ընդունելով Արայիկ Միխայլի Ղազարյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 11122018-06-0026 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Արայիկ Միխայլի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Մեծ Այրում գյուղի 06-073-0217-0019 ծածկագրում գտնվող, 0.93029 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող՝ ցածրարժեք հողատեսքը փոխադրել բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարկի, կորիզավոր այգի հիմնելու նպատակով:
2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
3. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 131-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԾԿԻ ԵՎ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ծածկը, անավարտ շինությունը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից տրված թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի 16 շենքի հարավային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 16.0 քմ արտաքին մակերեսով (16.0 քմ ներքին մակերեսով) ծածկի, 9.57 քմ արտաքին մակերեսով (7.3 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության անավարտ շինության նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի 16 շենքի հարավային մասում գտնվող, 2004թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2022U9QYAM ծածկագրով հաշվառված, 16.0 քմ արտաքին մակերեսով ծածկը, 9.57 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության անավարտ շինությունը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.02785 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի 16 շենքի հյարավային մասում գտնվող բնակելի նշանակության ծածկին և անավարտ շինությանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էնգելս թաղամաս, 28/1 ծածկ, անավարտ շինություն փոստային հասցե:
4. Բնակելի նշանակության ծածկի և անավարտ շինության զբաղեցրած 0.02785 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ծածկի և նշագծված տարբերակով անավարտ շինության նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Լենա Օնանյանին, օրինականացված և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 13
ք. Ալավերդի